

15 դեկտեմբերի 2011 թվականի N 1781 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՎԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի N 160-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ  
Մ Ա Ս Ի Ն

-----

Համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» N 160-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները՝

1) 128-րդ կետից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 128.1-ին կետով.

« 128.1. Էթանթիոլ	5*10 <sup>-5</sup>	-	3	».
-------------------	--------------------	---	---	----

2) 171.1-ին կետից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 171.2-րդ կետով.

«	171.2.	Կալցիումի հիդրօքսիդ (հանգած կիր)	0.03	0.01	3	».
---	--------	----------------------------------	------	------	---	----

3) 202-րդ կետից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 202.1-ին կետով.

«	202.1.	Մեթիլացետիլեն	3.0	-	4	».
---	--------	---------------	-----	---	---	----

4) 240-րդ կետից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 240.1-ին կետով.

«	240.1.	Նատրիումի կարբոնատ (կալցինացված սոդա)	0.15	0.05	3	».
---	--------	--	------	------	---	----

5) 243-րդ կետից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 243.1-ին կետով.

«	243.1.	Նատրիումի քլորիդ	0.5	0.15	3	».
---	--------	------------------	-----	------	---	----

6) 283-րդ կետից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 283.1-ին կետով.

«	283.1.	Սկիպիդար	2	1	4	».
---	--------	----------	---	---	---	----

7) 326-րդ կետից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 326.1-ին կետով.

«	326.1.	2,4,6- տրիամին-1,3,5-տրիագին	0.02	0.01	2	».
---	--------	------------------------------	------	------	---	----

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 60-րդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ